ՄԱԿ-ը և միջազգային իրավունքի ճգնաժամը

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 13.10.2024 թ.[1]

02.10.2024 թ. Իսրայելի կառավարությունը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշին հայտարարել է անցանկալի անձ: Իսրայելի ԱԳՆ ղեկավար Իսրայել Կացը պաշտոնապես հայտնել է, որ Գուտերեշին արգելված է մուտք գործել հրեական պետություն: Ի. Կացն այդ որոշումը բացատրել է նրանով, որ Ա. Գուտերեշը *«հանդես չի եկել Իրանի հրթիռային հարվածի անվերապահ դատապարտմամբ»*: Իսրայելի ԱԳՆ ղեկավարը *«X»* սոցցանցի իր էջում գրել է. *«Յուրաքանչյուր ոք, ով չի կարող միանշանակ դատապարտել Իրանի նողկալի հարձակումն Իսրայելի վրա, ինչպես դա արել են աշխարհի գրեթե բոլոր երկրները, արժանի չէ Իսրայելի հողի վրա ոտք դնելուն»*:

Դրանով հանդերձ, ՄԱԿ-ի ստեղծման ողջ պատմության ընթացքում առաջին անգամ այդ, թվում է թե ամենաազդեցիկ միջազգային կառույցի անդամ-երկիրը նման պատժամիջոց է կիրառել դրա ղեկավարի հանդեպ: Դեպքն աննախադեպ է, ինչի մասին վկայում է ՄԱԿ-ի ինչպես շարքային, այնպես էլ առանցքային անդամ-երկրների, ներառյալ՝ Անվտանգության խորհրդի անդամների արձագանքը: Կացի հայտարարությունից մեկ ժամ անց այդ համաշխարհային կազմակերպությունում ՌԴ մշտական ներկայացուցիչ Վ. Նեբենզյան ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստում Իսրայելի վարմունքն անվանել է *«գյադայական արարք»* և *«ապտակ»* Անվտանգության խորհրդին: Այդ հարցի առնչությամբ առավել զուսպ է արտահայտվել ԱՄՆ-ը, սակայն նույնպես հասկացնելով, որ Թել Ավիվի նման վարքագիծը դուրս է գալիս թույլատրելի նորմերի շրջանակներից: ԱՄՆ-ի պետքարտուղարության պաշտոնական ներկայացուցիչ Մ. Միլլերը լրագրողների հետ ճեպազրույցում հայտարարել է, որ Իսրայելի գլխավոր դաշնակից Վաշինգտոնը նրա վարմունքը չի ողջունում. *«Մենք չենք համարում, թե այդ քայլն արդյունավետ կլինի այս կամ այն տեսքով»*: Իր հերթին՝ Չինաստանը նույնպես աջակցություն է հայտնել Ա. Գուտերեշին՝ դատապարտելով Թել Ավիվի արարքը: ՄԱԿ-ում ՉԺՀ մշտական ներկայացուցիչ Ֆու Կոնգի խոսքով՝ Պեկինը հանդես է գալիս *«Իսրայելի անհիմն որոշման դեմ, որն իր իսկ դեմ է»*:

Համանման ուղերձներով արդեն շատ երկրներ են հանդես եկել՝ ինչպես այդ միջազգային կազմակերպություններում դեսպանների, այնպես էլ արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների և պետությունների առաջին դեմքերի մակարդակով, ինչը վկայում է, որ իսրայելական նախաձեռնությունը մեծ արձագանքի է արժանացել: Միջազգային լսարանի համար խոսքը վերաբերում էր ոչ թե ՄԱԿ-ի այս կամ այն որոշման դեմ դեմարշին և ոչ էլ, պարզապես, նրա պասիվության դատապարտմանը, այլ միջազգային իրավաքաղաքական կառույցի բարձրագույն

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 10.10.2024 թ.:

ներկայացուցչի կարգավիճակում գտնվող անձի նկատմամբ նսեմացնող վերաբերմունքին, կառույց, որը հանդիսանում է գոյություն ունեցող աշխարհակարգի կանոնները պահելուև պահպանելու երաշխավոր:

Եվ, այնուամենայնիվ, ճիշտ չէր լինի պնդել, որ աննախադեպ աղմկահարույց միջադեպի պատճառը գլխավորապես *«Իսրայելի լկտիությունն ու իրականության բթացած ընկալումն»* է, ինչի մեջ արդեն հասցրել են մեղադրել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մի շարք ոչ մշտական անդամներ: Իսրայելի ներկայիս իշխանությունների ինքնավստահությունն ու բացառապես սեփական շահերի և ամենաթողության ու սեփական անմեղության վարկածի տեսանկյունից իրադարձությունների մեկնաբանումը վաղուց գաղտնիք չէ: Ուշագրավ է, որ այն շարժառիթները, որոնք Իսրայելին մղել են դեմարշի դիմել ՄԱԿ-ի դեմ, չեն բխում այդ կառույցի անգործությամբ պայմանավորված «վրդովմունքից»՝ ի պատասխան պաղեստինյան և իրանական «ագրեսիային»: Առավել քան կարևոր դեր է խաղացել հենց իր՝ հրեական պետության անպատժելիության զգացումը, որը ՄԱԿ-ի կողմից որևէ պատժի չարժանացավ նույն այդ Իրանի, Պաղեստինի և այլ՝ իր հանդեպ թշնամաբար տրամադրված միջազգային սուբյեկտների նկատմամբ՝ իր թույլ տված միջազգային նորմերի և կանոնների կոպիտ խախտումների համար: Նույնիսկ ՄԱԿ-ի պաշտոնական արբիտրաժը այլևս կորցրել է իր նշանակությունը Թել Ավիվի համար:

Ինչպե՞ս է ՄԱԿ-ը թույլ տվել իր հեղինակությունն իջնի նման մակարդակի: Ո՞րն է հենց կազմակերպության մեղքի և նրա հաստատութենական անկարողության չափը, որ հնարավոր է դարձրել նման միջադեպը: Չէ՞ որ օբյեկտիվության տեսակետից, հաշվի առնելով միջազգային ասպարեզում ՄԱԿ-ի գործունեությանը վերաբերող բազմաթիվ հարցերը, վերոնշյալ աղմկահարույց քայլով կարող է աչքի ընկնել ոչ միայն Իսրայելը, այլև մեծ թվով այլ երկրներ, որոնք զրկված են միջազգային հանրության ուշադրությունից և արդարությունից: Այլ հարց է, որ տվյալ պահին հենց հրեական պետությունն է օժտված այն աստիճանի ինքնուրույնությամբ և ուժով, ինչը նրան թույլ է տալիս «ապտակ հասցնել» գերիշխող միջազգային հաստատությանը: Եվ խոսքը ոչ թե հենց կազմակերպության, և, հատկապես, ոչ էլ դրա գլխավոր քարտուղարի անձի մասին է, այլ հենց միջազգային իրավունքի համապիտանի հաստատության, որի համակարգաստեղծ օղակը ՄԱԿ-ն է: Իսրայելը դրանով իսկ հրապարակավ հնչեցրել է այն ճշմարտությունը, որը գիտեին բոլորը, բայց նախընտրում էին չբարձրաձայնել. միջազգային իրավունքն այլևս չի գործում: Հետևապես, երկրների շահերի օրինականացման միակ աղբյուրը համարվում է միայն «ուժի իրավունքը», և հենց դա է ի վիճակի հաստատելու նոր կանոններ ու նոր կարգեր:

«Ուժի իրավունքը», ըստ էության, արդեն վաղուց գլոբալ աշխարհաքաղաքական իրողությունը ձևավորող հրամայական նորմ է, որը թաքնված է արդարության ու

մարդասիրության իբրև թե գործող և համապիտանի սկզբունքների հետևում: Արդի միջազգային իրավունքի համակարգի կայացման պատմության դիտարկումը թույլ է տալիս առանձնացնել երկու հիմնական գործոններ, որոնք ժամանակի ընթացքում դարձել են այդ հաստատությանը պատուհասած ճգնաժամի առանցքային պատճառները: Խոսքը վերաբերում է, նախ և առաջ, ԽՍՀՄ փլուզումից հետո աշխարհում ազդեցության ոլորտների և տարածությունների վերակազմակերպման գործընթացին, ինչը ցույց տվեց, որ աշխարհաքաղաքական հին կոնֆիգուրացիաների ապամոնտաժումը և նորերի կառուցումն անհնարին է միջազգային իրավունքի տառի պահպանման պարագայում: Իսկ երկրորդը՝ տեխնոլոգիական առաջընթացի համապատկերում իր ծանրակշիռ դերն է խաղացել հանրությունների արժեքային համակարգի աստիճանական անկումը՝ ձևավորելով սոցիումի մի նոր տեսակ, որն առանձնանում է սպառողականությանը նվիրվածությամբ և բարոյականության ու մարդասիրության համընդհանուր նորմերի մերժմամբ: Հարմարակեցությունը, անհոգևորությունը և անտարբերությունը դարձել են հասարակության վարքագծի չափանիշներ՝ շատ հարցերում կանխորոշելով նոր քաղաքական հայացքների և ընտրանիների առաջնահերթությունների համապատասխան միջավայրը: 20-րդ դարի 40-ական և 50-ական թվականներին աշխարհը համակած հոգևորության և մարդասիրության աճի ալիքը, որը հանգեցրել է աշխարհում ապագաղութացման և հասարակության անապահով շերտերի համար «բոնուսների», կտրուկ հետ է գլորվել՝ մակերեսին թողնելով այս տասնամյակների ընթացքում կուտակված հակասություններն ու հավակնությունները: Աշխարհակարգի վերակազմավորման գործընթացը ձեռք է բերել տարբեր գաղափարական շրջանակներ՝ կախված գլոբալ խաղացողներից և նրանց նպատակներից: Արևմուտքը գործում էր աշխարհի «գլոբալացման» և «ազատականացման» գաղափարական հայեցակարգերով, մինչդեռ գլոբալ Արևելքը ծնեց բազմաբևեռության, բազմազանության և աշխարհի մշակութա- քաղաքակրթական բազմազանության պահպանման գաղափարներ:

Միևնույն ժամանակ, չնայած տրամագծորեն հակառակ ձգտումներին և դրանցից բխող տարբեր գործնական խնդիրներին, երկու բևեռներն էլ պաշտոնապես ցույց տվեցին համապատասխանություն միջազգային իրավունքին, որը ամրագրված է ՄԱԿ-ի կանոնադրությամբ և կոդավորված նորմերի ու կանոնների փաթեթներով, որոնք համընդհանուր են ճանաչվել ողջ խաղաղ հանրության համար:

Միջազգային իրավունքի բուն տառը, ճիշտ Հին Կտակարանի պես, որևէ մեկի կողմից կասկածի տակ չի դրվել և խմբագրման կամ ճշգրտման ենթակա չի եղել: Սակայն դրա փոխարեն օրենքը ենթարկվել է համատարած խախտման իր անփույթ մեկնաբանության միջոցով: Հենց միջազգային իրավունքի ազատ մեկնաբանության գործոնն էր, որ ճանապարհ բացեց գլոբալ աշխարհաքաղաքական առճակատման դերակատարների համար՝ առաջ մղելու իրենց շահերը՝ շրջանցելով գոյություն ունեցող

աշխարհակարգի հռչակված նորմերը և կանոնները: Եվ հենց այս հանգամանքն էլ դարձավ «երկակի ստանդարտների» քաղաքականության ի հայտ գալու պատճառը, որը լճացման մեջ գցեց ՄԱԿ-ի հաստատությունը:

Հարավսլավիայի, Իրաքի և Լիբիայի ռմբակոծությունները, որոնք արտոնված չէին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կոնսենսուսային որոշմամբ, բայց իրականացվել են հղում կատարելով աշխարհում անվտանգության պաշտպանության վերաբերյալ այս կազմակերպության բոլոր դրույթների վրա, անհեթեթություն են՝ հիմնված «*այստեղ օրենքը պետք է հարգվի, իսկ այնտեղ այն պարտադիր չէ*» սկզբունքի վրա: Շատ առումներով, բուն միջազգային իրավունքի դրույթների խառնաշփոթը և միանշանակ փաստարկների ու միասնական մեկնաբանության բացակայությունը հեշտացրել են խախտողների գործը: ՄԱԿ-ի Կանոնադրությունը և այս կազմակերպության կողմից ընդունված հարյուրավոր ակտեր դեռևս չեն նպաստել հայեցակարգային ապարատի հստակ քաղաքական և իրավական սահմանազատմանն այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են «*սահմանների անձեռնմխելիությունը*» և «*ինքնորոշման իրավունքը*», «*հարևան երկրի տարածքների բռնազավթումը*» և «*անվտանգության բուֆերային գոտու ստեղծումը*», «*ահաբեկչական գործունեությունը*» և «*հարկադրված ինքնապաշտպանությունը*»:

Հաշվի առնելով այս հասկացությունների որակավորման չափանիշների և մեթոդաբանության փաստացի անորոշությունը, ինչպես նաև հզոր քաղաքական լոբբինգի առկայությունը, միջազգային իրավունքի հաստատությունը՝ ի դեմս ՄԱԿ-ի, սկսեց բոլորովին այլ գնահատականներ տալ և ընտրովի մոտեցումներ կիրառել համանման խնդիրների նկատմամբ: Հարավային Սուդանի անջատումը որակվեց որպես ինքնորոշման իրավունքի իրացման ակտ, մինչդեռ Ադրբեջանից անկախանալու Ղարաբաղի հանրաքվեն մեկնաբանվեց որպես միջազգային իրավունքին չհամապատասխանող: Ռուսաստանի ներխուժումն Ուկրաինա մեկնաբանվում է որպես ագրեսիայի և օկուպացիայի ակտ, մինչդեռ Անկարայի կողմից Սիրիայի հյուսիսային տարածքների գրավումը գործնականում ողջունվում է՝ նկատի առնելով թուրքական սահմանների անվտանգության հրամայականը: Հյուսիսային Կովկասում ահաբեկչական սինդիկատների գործողությունները ներկայացված են ազատագրական ապստամբական պատերազմի պրիզմայում, մինչդեռ Գազայի խաղաղ բնակչության դեմ իսրայելցիների պատժիչ զանգվածային գործողությունները մեկնաբանվում են որպես «*լայնածավալ հակաահաբեկչական գործողություն*»:

Միջազգային իրավունքի ինստիտուտների անկարողության մեկ այլ կարևորագույն ցուցանիշ է միջազգային կարգը և դրա կանոնները խախտող երկրներին և այլ սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու անբողոքարկելի միջոցների մեխանիզմի բացակայությունը: ՄԱԿ-ի քաղաքականության մեջ պատժամիջոցների

պրակտիկան ընտրանքային է՝ վերստին հաշվի առնելով ներքին և արտաքին լոբբինգը: Այս ոլորտում ճգնաժամի ամենախոսուն օրինակը ՄԱԿ-ի հովանու ներքո գործող Հաագայի Միջազգային դատարանի բազմաթիվ վճիռներն են, որոնց կիրարկումը ամբաստանյալ երկրները դանդաղեցնում կամ բացարձակապես անտեսում են:

Միջազգային դատարանն ինքը չունի պատասխանող կողմերին հարկադրելու գործիքներ, սակայն ՄԱԿ-ը, որը ստեղծել և երաշխավորում է Միավորված ազգերի կազմակերպության այս կառույցի աշխատանքը, կարող է և իրավունք ունի պատժամիջոցային ճնշում նախաձեռնել ինչպես սեփական, այնպես էլ այլ կառույցների, ինչպես նաև հենց կազմակերպության անդամ երկրների հաստատութենական կարողությունների միջոցով: Այնուամենայնիվ, դա միշտ չէ, որ արվում է, ինչը կասկածի տակ է դնում ոչ միայն կազմակերպության աշխատանքի որակն ու կարողությունները, այլև դրա հեղինակությունը: «Մեղք–պատասխանատվություն–հարկադրանք» տրամաբանության մեջ ՄԱԿ-ի գործողությունների ալգորիթմների աստիճանական անկման հստակ ապացույցը կրկին կարող է լինել Ղարաբաղյան օրակարգի դրվագներից մեկը: 2023 թ. փետրվարին Արդարադատության միջազգային դատարանը Հայաստանի Հանրապետության պահանջով «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի» դրույթների շրջանակներում Ադրբեջանին պարտավորեցրել է ապահովել անարգել տեղաշարժը Լաչինի միջանցքով: Բաքուն ոչ միայն չկատարեց այս պահանջը, այլև խստացրեց Արցախի Հանրապետության շրջափակումը, որից հետո իրականացրեց դրա ռազմական զավթումն ու կազմակերպեց էթնիկ զտումներ Լեռնային Ղարաբաղի տարածքում: Հաագայի դատարանը հաստատեց Ադրբեջանի կողմից միջազգային իրավունքի և իր պարտավորությունների կոպիտ խախտումը: Դատարանի արձագանքն ակնհայտորեն օրինականացրեց այն պատժամիջոցները, որոնց ՄԱԿ-ը կարող էր դիմել՝ Բաքվին պատասխանատվության ենթարկելու մասով: Սակայն ՄԱԿ-ը ոչինչ չարեց՝ դրանով իսկ Բաքվի համար ճանապարհ հարթելով ապագայում միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներին հակասող նմանատիպ քայլերի դիմելու համար:

Հակամարտությունների բազմաթիվ դրվագներում և, ընդհանրապես, բոլոր միջազգային հարցերում ՄԱԿ-ի վարքագծի նման մարտավարությունը առիթ է տվել, որ աշխարհում միջազգային իրավունքի գրեթե բոլոր սուբյեկտ–շահառուները այս միջազգային կազմակերպությանը մեղադրեն թուլության, կոռուպցիայի և հարմարվողականության մեջ:

Չխորանալով ՄԱԿ-ին առաջադրված բոլոր մեղադրանքների մանրամասների մեջ, պետք է նշել, որ «*հարմարվողականություն*» սահմանումը, մեր կարծիքով, առավել համապարփակ է արտացոլում միջազգային ասպարեզում այս կառույցի վարքագծի և գործողությունների բնույթը: Կասկածից վեր է, որ ՄԱԿ-ի հաստատությունը, որն ի սկզբանե մտածված էր որպես համաշխարհային աշխարհաքաղաքական

գործընթացները հավասարակշռող մարմին, ի զորու չէ իր կշիռն ու գործառույթները «պաշտպանել» միջազգային քաղաքականության հիմնական խաղացողների անմիջական ազդեցությունից: ՄԱԿ-ը միջազգային իրավիճակից և ուժերի աշխարհաքաղաքական հավասարակշռությունից ամբողջովին կախված կառույց է: Բայց, դրա հետ մեկտեղ, առարկայական իրականությունը հուշում է, որ այս կազմակերպությունը, երկար ժամանակ խճճված լինելով գլոբալ կենտրոնների շահերի և հակասությունների մեջ, այսուհետ ի վիճակի չէ հավակնել միջազգային իրավունքի «քարե տախտակի» պահառուի դերին: Եվ, փաստորեն, խնդիրը ոչ թե բուն ՄԱԿ-ի, նախորդ աշխարհակարգի բուրգի այս ձևական վերնաշենքի մեջ է, այլ հենց այս կարգի վերակազմակերպման մեջ, որը Երկրորդ աշխարհամարտի հետևանք էր, սակայն արդեն ժամանակավրեպ նորագույն իրողություններում:

Միջազգային իրավունքի «քարե տախտակները» չեն խմբագրվի, բայց քանի դեռ աշխարհը գտնվում է իր նոր կազմաձևման և արժեքային համակարգի որոնման գործընթացում, այդ իրավունքը չի գործելու: Իսկ առայժմ՝ սոսկ «*ուժեղի իրավունքն*» է լիարժեք գործողության և հարգ ու պատվի մեջ, ինչը Իսրայելն առաջինն էր, որ բացահայտ և առանց ձևականության ցուցադրեց: